

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 56/1

26 նոյեմբերի 2013 թ.

Քննարկվեց Ա/Ձ Գարեգին Բայանի 05.11.2013 թ-ի գրությամբ բերված բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 21.10.2013 թ-ի թիվ 1108369 ստուգման ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի 26.07.2013թ. թիվ 2215181 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Գարեգին Բայանի մոտ կատարվել է հսկիչ-դրամակղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Հսկիչ գնման արդյունքում 04.09.2013 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2215181 արձանագրությունը (այսուհետ նաև Արձանագրություն), որով արձանագրվել է ՀՀ Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի բ) ենթակետի պահանջների խախտման փաստ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 18.09.2013 թ-ին հրապարակվել է թիվ 1108369 հանձնարարագիրը, որի համաձայն Ա/Ձ Գարեգին Բայանի մոտ կատարվել է հսկիչ-դրամակղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 21.10.2013 թ-ի թիվ 1108369 ստուգման ակտ (այսուհետ նաև ստուգման ակտ), որով կիրառվել է «Հսկիչ դրամակղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասով սահմանված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

Ա/Ձ Գարեգին Բայանի բողոքում բերված փաստարկները.

Բողոքաբերը նշում է, որ իր կողմից խախտում չի կատարվել: Մասնավորապես, նա կտրոնը խփել է և դրել սեղանին, իսկ գնորդ՝ ոմն Սրբուհին, սնիկերսը վերցրել է և հեռացել խանութից: Մոտ 20-ից 30 րոպե հետո ներս են մտել երևու հոգի առանց ծառայողական վկայականները ցուց տալու և առանց գնորդի ու պահանջել են ՀԴՄ-ից դուրս բերել: Շ հաշվետվությունը: Բողոքաբերը ՀԴՄ-ից դուրս է բերել Շ հաշվետվությունը և տվել իրենց: Նրանցից մեկը նայելով Շ հաշվետվությունում առկա թվին ասել է, որ լավ է, սակայն միաժամանակ նշել է ՀԴՄ կտրոն չտրամադրելու մասին: Բողոքաբերը պատասխանել է, որ եթե ՀԴՄ կտրան չի տրամադրում, ապա որտեղից է գոյացել ֆիսկալային թիվը: Այնուհետև այցելուներից մեկը զանգահարել է ոմն Ռիտային և նրա հրահանգով ցանկացել է դուրս բերել հետադարձ հաշվարկը, բողոքաբերի կատարած սխալն ապացուցելու համար, բայց այդպես էլ դուրս չի բերել: Նա 350 դրամ մուտք է արել ՀԴՄ և նորից հանել է Շ հաշվետվություն, որը, սակայն, մինչ օրս բողոքաբերին չի ներկայացվել: Այդ իսկ պատճառով վեջինս հրաժարվել է ստորագրել համապատասխան փաստաթղթերը: Միաժամանակ բողոքաբերը Հրազդանի ՏՀՏ-ից ստացել է նամակներ, որոնց վերաբերյալ հայտնել է իր բողոքը, սակայն որևէ արձագանք չի ստացել: Վերջին օրով իրեն պարզապես տեղեկացրել են, որ ստուգման ակտին համաձայն չլինելու դեպքում այն կարող է բողոքարկել ՀՀ ԿԱ ՊԵԿ գանգատարկման հանձնաժողով:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Գարեգին Բայանը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 21.10.2013 թ-ի թիվ 1108369 ստուգման ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ի (այսուհետ՝ Հավելված 2) 1.5-րդ կետի. «Հսկիչ

գնումից հետո, բայց ոչ ուշ, քան հանձնարարագրում նշված ժամկետի վերջին օրը, հանձնարարագիրը ներկայացվում է տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, բացառությամբ հսկիչ գնման արդյունքում խախտումներ հայտնաբերելու դեպքի, երբ հանձնարարագիրը տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին է ներկայացվում հսկիչ գնումից հետո»:

Իր հերթին, Հավելված 2-ի 1.6-րդ կետի համաձայն. «Հսկիչ գնման արդյունքում հանձնարարագրի ներկայացման օրը կազմվում է հարկային մարմնի կողմից սահմանված ձևով արձանագրություն՝ երկու օրինակից»:

Վերոգրյալից հետևում է, որ հսկիչ-դրամակղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում) կատարելու վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի 26.07.2013 թ-ի թիվ 2215181 հանձնարարագրը պետք է Ա/Ձ Գարեգին Բայանին ներկայացվեր հսկիչ գնում կատարելու օրը, այն է՝ 23.08.2013 թ-ին, և նույն օրը պետք է կազմվեր նաև հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2215181 արձանագրությունը:

Քննարկվող դեպքում հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2215181 արձանագրությունը կազմվել է ոչ թե հսկիչ գնում կատարելու օրը՝ 23.08.2013 թ-ին, այլ՝ 04.09.2013 թ-ին: Այսինքն, Արձանագրությունը կազմվել է Հավելված 2-ի 1.6-րդ կետով սահմանված պահանջների խախտմամբ:

Հարկ է նշել նաև, որ Հավելված 2-ի 1.6-րդ կետի համաձայն. «Արձանագրությունն ստորագրում են հսկիչ գնում կատարող անձինք և տնտեսվարող սուբյեկտի անունից ապրանքներ վճարող, ծառայություններ մատուցող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողը»:

Քննարկվող դեպքում Արձանագրությունում հիշատակված հսկիչ գնումը կատարել է քաղաքացի Սրբուհի Արզումանյանը, հետևապես վերջինս նույնպես պետք է ստորագրեր Արձանագրությունը: Սակայն, ուսումնասիրելով հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 04.09.2013 թ-ի թիվ 2215181 արձանագրությունը, Հանձնաժողովն արձանագրեց, որ այն հսկիչ գնումը փաստացի կատարած անձի՝ Սրբուհի Արզումանյանի կողմից ստորագրված չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Գարեգին Բայանի կողմից բողոքարկվող ստուգման ակտը կազմելու համար հիմք հանդիսացած հիմնական ապացույցը, այն է՝ Արձանագրությունը, կազմվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ռ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 21.10.2013 թ-ի թիվ 1108369 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ